ԿԱՐԾԻՔ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և հարակից այլ օրենքների նախագծերով նախատեսված ՀԿ-ների դատարան դիմելու իրավասության կարգավորումների վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 14-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հրապարակել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և հարակից այլ օրենքների նախագծեր, որոնցով, ի թիվս այլնի, առաջարկվում է ընդլայնել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը՝ այդպիսի հնարավորություն ընձեռելով նաև **հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն):**

Գաղտնիք չէ, որ հանրային շահերի պաշտպանության իրականացումը երրորդ անձանց կողմից հանդիսանում է իրավունքների պաշտպանության մեխանիզմ, որը սկիզբ է առնում դեռևս հռոմեական իրավունքից: Ներկայումս էլ միավորումների և Կազմակերպությունների կողմից երրորդ անձանց իրավունքների պաշտպանությունը գործող մեխանիզմ է հանդիսանում եվրոպական մի շարք երկրներում և այդ մեխանիզմի առկայությունը հատկապես կարևորվում է խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համատեքստում: Ավելին, Կազմակերպությունների կողմից հանրային շահերի պաշտպանության իրականացումն այս կամ այն կերպ սահմանադրական ամրագրում է ստացել եվրոպական մի շարք երկրների սահմանադրություններում՝ (Պորտուգալիա, Իսպանիա, Խորվաթիա, Հունգարիա) սահմանելով նաև որոշակի պահանջներ, որոնց պետք է բավարարեն Կազմակերպությունները՝ նախքան իրենց կողմից կոլեկտիվ շահերի պաշտպանության նկատառումով դատարան դիմելու իրավունքից օգտելը:

Հարկ է նկատել նաև, որ երկրները տարբեր մոտեցումներ են որդեգրել Կազմակերպությունների կողմից հանրային շահերի պաշտպանության իրականացման

համար անհրաժեշտ պահանջներ սահմանելու հարցում, մի դեպքում նշելով, որ, օրինակ՝ ասոցիացիաները, Կազմակերպությունները և օրենքով սահմանված այլ կառույցները, իրենց համար **առաջնային նպատակ պետք է դնեն պաշտպանելու** որոշակի խմբերի կոլեկտիվ շահերը (Խորվաթիա), հաջորդ դեպքում պարտադիր նախապայման է հանդիսանում **անձի գրավոր համաձայնությունը** (Մոնտենեգրո), մեկ այլ դեպքում էլ կարևորվում է **Կազմակերպության գործունեության ոլորտը՝** օրինակ, բնապահպանական գործունեությամբ զբաղվողները հնարավորություն ունեն դատական գործընթացներ սկսելու, երբ հանրային շահի պաշտպանության հարց է բարձրացվում (Գերմանիա):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ներկայումս «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակական կազմակերպությունները իրենց շահառուների օրինական շահերը դատարանում կարող են ներկայացնել **միայն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում՝** սահմանելով որոշակի պահանջներ: Դրանք են.

1) հայցադիմումը բխում է Կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է Կազմակերպության շահառուների՝ Կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը.

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրույթային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին, կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և

3) հայց ներկայացնելու պահին **նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 2-րդ մասում նշված ոլորտում:**

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է հնարավորություն տալ Կազմակերպությանը՝ իրենց շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացման նպատակով վարչական դատարանում վիճարկելու բոլոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ միևնույն ժամանակ նախատեսելով այնպիսի պահանջներ, որոնց պարտադիր պետք է բավարարեն Կազմակերպությունները՝ այդ ակտերի իրավաչափությունը դատարանում վիճարկելու համար: Դրանք հետևյալն են՝

1) դիմումը բխում է Կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է Կազմակերպության շահառուների՝ Կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված շահերի պաշտպանությանը.

2) դիմում ներկայացնելու պահին **նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել վիճարկվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կարգավորման ոլորտում:**

Նախագծերով առաջարկվող վերոնշյալ կարգավորումների առնչությամբ, միանշանակ դրական գնահատելով այն, որ Կազմակերպություններին այսուհետ հնարավորություն կընձեռնվի դատարանում վիճարկելու **բոլոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը,** ինչը նրանց՝ որպես քաղաքացիական վերահսկողության և հանրային մասնակցության գործառույթներ իրականացնող հիմնական դերակատարների, լրացուցիչ հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպելու իրենց շահառուների իրավունքների պաշտպանությունը, այնուամենայնիվ գտնում ենք, որ Կազմակերպությունների կողմից դատարան դիմում ներկայացնելու պահին **նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում վիճարկվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կարգավորման ոլորտում գործունեություն ծավալած լինելու պահանջի** սահմանումը ոչ միայն ավելորդ խոչընդոտներ է ստեղծելու, որպեսզի Կազմակերպությունները առավել հաճախ օգտվեն դատարան դիմելու իրենց իրավունքից, այլև նշված կարգավորումը խնդրահարույց է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից: Այսպես.

1) Նախ հարկ ենք համարում նշել, որ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ, ի լրումն նույն օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի Կազմակերպությունները դիմում ներկայացվելու դեպքում՝ պետք է ներկայացնեն նաև այդ կազմակերպության կանոնադրության պատճենը և **տվյալ ոլորտում** նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն ծավալելու մասին ապացույցներ, մինչդեռ կից ներկայացված «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում խոսք է գնում դիմում

ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում **վիճարկվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կարգավորման ոլորտում** գործունեություն ծավալելու մասին: Այսինքն, հանրային քննարկման ներկայացված օրենքների նախագծերի փաթեթում առկա է ներքին հակասություն և պարզ չէ, թե արդյունքում Կազմակերպությունների համար որ պահանջն է պարտադիր համարվելու:

2) Բացի այդ, պարզ չէ, թե Դատարանը Կազմակերպության կողմից ներկայացված՝ տվյալ ոլորտում նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն ծավալելու մասին ո՞ր ապացույցները կգնահատի **թույլատրելի և վերաբերելի:** Օրինակ, եթե Կազմակերպությունն ունենալով մի քանի կանոնադրական նպատակներ և վերջին երկու տարում ակտիվ գործունեություն է իրականացրել իր կանոնադրական նպատակներից մեկ կամ երկուսի շրջանակներում և դրանք առնչություն չունեն դիմումով վիճարկվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կարգավորման ոլորտին, ապա դատարանն ինչպե՞ս պետք է գնահատի ներկայացված ապացույցները, կամ էլ օրինակ, ներկայացված ո՞ր ապացույցները վերաբերելի կհամարվեն՝ հասարակական կազմակերպության կողմից իր շահառուին անվճար խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ լրացվող հարցաթերթե՞րը, դոնորի հետ Կազմակերպության կնքած դրամաշնորհային պայմանագի՞րը (այս դեպքում էլ օրինակ պայմանագիրը կարող է մեկ հարյուր էջից ավել լինի, և կազմված լինի ոչ հայերեն լեզվով: Ստացվում է, որ կազմակերպությունների վրա կդրվի լրացուցիչ պարտականություն, այդ թվում նաև ֆինանսական, հիշյալ փաստաթղթերի թարգմանության համար), թե՞ Կազմակերպության կողմից իրականացրած ծրագրերի արդյունքներն ամփոփող հաշվետվությունները:

3) Միևնույն ժամանակ, վերոնշյալ նախագծերին կից ներկայացված հիմնավորման մեջ միջազգային փորձի վերլուծության արդյունքներ չեն ներկայացվել, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու, թե որքանո՞վ է հիմնավորված Կազմակերպության կողմից՝ տվյալ ոլորտում նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն ծավալելու մասին ապացույցներ ներկայացնելու պահանջի սահմանումը, արդյո՞ք այն համապատասխանում է actio popularis

բողոքների ինստիտուտի ներդրման վերաբերյալ ներկայիս զարգացումներին և արդյո՞ք բխում է միջազգային լավագույն փորձից:

Վերոգրյալի լույսի ներքո առաջարկում ենք շահագրգիռ կողմերի հետ լրացուցիչ քննարկման առարկա դարձնել Կազմակերպությունների կողմից իրենց շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացման նպատակով դատարան դիմելիս լրացուցիչ պահանջներ սահմանելու նպատակահարմարության հարցը, իսկ այդպիսի պահանջներ սահմանելու անհրաժեշտության դեպքում՝ դրանք սահմանել բավարար չափով որոշակի և համահունչ միջազգային լավագույն փորձին: